ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ՀՀ ֆինանսների նախարարության 02.08.2021թ. թիվ 26/26-1/12297 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի քննությունը կասեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի 26.07.2021թ. թիվ 01/61-15071 գրության հիման վրա «Ժիլյո» Ա/Կ-ին «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության 02.08.2021թ. թիվ 26/26-1/12297-2021 գրությունը, ինչպես նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Մ.Բունիաթյանի՝ «Ժիլյո» Ա/Կ-ի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու վերաբերյալ 29.07.2021թ. կայացված որոշումը՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/137» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ժիլյո» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության 02.08.2021թ. թիվ 26/26-1/12297 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի քննությունը՝ մինչև ԵԴ/33020/02/21 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ